ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. 060-80-00-70,
Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)

թիվ 31-18
15 հունվարի, 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 8-ի N 1-Ա և N 2-Ա որոշումները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝
Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիգրանյան

Կատարող՝ Ն. Վարդանյան
հեռ. 060-80-00-70

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

8 հունվարի 2018 թվականի, N 1-Ա

«ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքով», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի N 1060-Ն որոշմմբ, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագիծը՝

որոշում եմ.

1. Օրինականացնել Օձուն համայնք 8 փողոց թիվ 9/5 փոստային հասցեում ինքնակամ կառուցված, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող կառուցապատված 50.4 քմ մակերեսով ավտոտնակի, ինչպես նաև զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.00602 հա մակերեսով հողամասը և դրանց նկատմամբ ճանաչել Հայաստանի Հանրապետության Օձուն համայնքի սեփականության իրավունքը:

2. Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Օձուն համայնք, գյուղ Օձուն, 9-րդ փողոց, թիվ 9/5:

5. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն սույն որոշման 1-ին կետում նշված կառույցն իրականացրած անձին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:

6. 5-օրյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանում՝ սույն որոշման առաջին կետում նշված շինության և ծանրաբեռնված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., հունվարի 8
Լոռու մարզ, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

8 հունվարի 2018 թվականի, N 2-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 12-րդ և 15-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի «ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ, ԻՍԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ՝ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 843-Ն որոշման, Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 18-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 53-Ն որոշման՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի վարչական տարածքում 2018 թվականի համար առևտրային գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացված ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություններ տալու մասին հայտերը բավարարել, Օձուն համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 18-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 11-Ն որոշման համապատասխան գանձել տեղական տուրք և տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագրերը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում հայտատուներին հանձնել հաստատված թույլտվությունները՝ հայտատուների կողմից վճարված տեղական տուրքին համապատասխանող ժամկետով՝ 2018 թվականի առաջին եռամսյակի համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2018թ., հունվարի 8
Լոռու մարզ, գ. Օձուն